



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

ք. Ղազար, Գ. Լուսավորչի փ. 36
հեռ. /0264/2-34-31

N-----

«-----» -----2011թ.

**«Հ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Պ-ՐՆ Մ.ՂԱԶԱՐՅԱՆԻՆ»**

Հարգելի պարոն Ղազարյան

«Հ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմը, ակտիվորեն համագործակցելով հանրապետական գործադիր մարմինների հետ, միշտ հանդես է եկել օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններով և սահմանված ժամկետներում քննարկել ներկայացված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը:

Նշված հարցում մեր ակտիվությունն ակնհայտ է նաև կրթության օրենսդրության կատարելագործման ուղղությամբ, որոնց սակայն միշտ չէ, որ կարողանում ենք անդրադառնալ՝ ժամանակին չիրագեցվելու պատճառով:

«Հ կրթության և գիտության նախարարի կողմից վերջերս ընդունված երկու կարևորագույն նորմատիվ իրավական ակտերին (Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 1640-Ն և 2011 թվականի հունվարի 18-ի N 23-Ն հրամաններ) ծանոթանալով, չնայած ունենք բազմաթիվ դիտարկումներ, այնուամենայնիվ խնդրում ենք Ձեր պարզաբանումը հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. Կարգի 20-րդ կետով սահմանվել է, որ «Սովորողների (այդ թվում՝ ոչ պետական դպրոցների) ընդունելությունը դպրոց ըստ ենթակայության հաշվառվում է 1) Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) կրթության վարչություններում» մինչդեռ չի սահմանվել, թե ե՞րբ, ի՞նչ ժամկետներում, ի՞նչ տվյալներ են ներկայացվում հաշվառման և ի վերջո ո՞վ է ներկայացնում հաշվառման. ծնո՞ղը, թե՞ ընդունող դպրոցը:

Միաժամանակ պարզ չէ, թե ո՞ր սովորողների ընդունելությունն է հաշվառվում. ուսումնական տարվա ընթացքում ընդունված բոլո՞ր սովորողների (այդ թվում 1-ին դասարանցիներին), թե՞ աշակերտների համակազմի (կոմպլեկտավորման) տվյալները ներկայացնելուց հետո ընդունվածների:

2. Հանրակրթական ուսումնական հաստատություններում տարբեր առիթներով ուսումնասիրություններ կամ տեսչական ստուգումներ իրականացնելիս, հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի լրացման համապատասխան կարգերի կամ պարզաբանումների բացակայության պարագայում, տարբեր անձանց (կամ ստուգողների) կողմից տրվում են տարաբնույթ ցուցումներ ու պարզաբանումներ, որը չի բացառվելու նաև Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի հունվարի 18-ի N 23-Ն հրամանով «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը» հաստատելուց հետո՝ դրանց ձևերը և լրացման կարգը չսահմանելու պատճառով:
Բացի դրանից գտնում ենք, որ անվանացանկում չեն ընդգրկվել նաև տարբեր իրավական ակտերի համաձայն հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի անվանումներ, ուստի հարց է առաջանում, արդյո՞ք այդ փաստաթղթերի անվանացանկը վերջնական է, և ինչ կարգով են դրանք լրացվելու:
3. Եթե համապատասխան հրամանով ուժը կորցրած չի ճանաչվել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2000 թվականի օգոստոսի 15-ի «ՀՀ հանրակրթական դպրոցում, վարժարանում և կրթահամալիրում պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» N 264-Մ հրամանը, ապա ենթադրվում է արդյոք, որ նշված ցանկով նախատեսված փաստաթղթերը ևս գործածության մեջ են, և արդյո՞ք դրանց լրացման կարգը ուժի մեջ է:

Հարգանքով՝

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ